# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար տնտեսական, սանիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-01/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «02» մայիսի 2017թ.
ժամը՝ 12:00

*Մասնակցում էին՝*

*հանձնաժողովի նախագահ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Էլլադա Արզաքանյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Աղավնի Բուդոյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է՝*

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

**1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-01/17» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին.**

Կազմակերպված բանակցություններին մասնակիցներից ոչ մեկը ներկա չի գտնվել:

**Հանձնաժողովը որոշեց.**

- ընթացակարգը 18-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն (պայմանագիր չի կնքվում):

-հաստատել «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-01/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 18-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

1-ին, 3-րդ, 4-րդ, 7-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 20-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՏԻՍԱ» ՓԲԸ-ին:

2-րդ, 5-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 16-րդ, 17-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷՔՍՊՐԵՍ ՇԻՆ» ՍՊԸ-ին:

19-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Ռուբեն Հակոբյան Ա/Ձ-ին:

21-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԼԻԴԵՐ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ին:

26-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՄՍՈՒՍ» ՍՊԸ-ին:

1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 14-րդ, 21-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷՔՍՊՐԵՍ ՇԻՆ» ՍՊԸ-ին:

6-րդ, 12-րդ, 20-րդ, 24-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԼԻԴԵՐ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ին:

13-րդ, 26-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷԼԻՊՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

9-րդ, 17-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՏԻՍԱ» ՓԲԸ-ին:

7-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 15-րդ, 16-րդ, 19-րդ, 22-րդ, 23-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

*Ընդունվել է որոշում. կողմ 4, դեմ 0:*

3. Հանձնաժողովը որոշեց գնահատող հանձնաժողովի 2017 թ. ապրիլի 20-ի թիվ 3 որոշման մեջ տեղ գտած տեխնիկական վրիպակները ուղղել՝
-3.5 կետի ա) ենթակետում <<1-ին չափաբաժնի մասով>> բառերը փոխարինել <<17-րդ չափաբաժնի մասով>> բառերով,
-3.5 կետի բ) ենթակետում <<24-րդ չափաբաժնի մասով>> բառերը փոխարինել <<26-րդ չափաբաժնի մասով>> բառերով:

*Ընդունվել է որոշում. կողմ 4, դեմ 0:*

**4. Հանձնաժողովի քարտուղարին.**
Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը
1) Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,
2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017թ. մայիսի 06-ը ներառյալ ներկայացնել Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ 4, դեմ 0:*

5. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2017թ. մայիսի 11-ին, ժամը 10:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Էդգար Տոնականյան

Անդամներ՝ Էլլադա Արզաքանյան

Աղավնի Բուդոյան

Սարգիս Արմենակյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան